

**LIFE – «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» ծրագրի**

**ՏԵՂԵԿԱԳԻՐ**  
#6 - հունիս 2013



LIFE ծրագիրը (2012-2015) իրականացնում է «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ:

Ծրագրի գործընկերներն են «Ակտիվա» միջազգային հիմնադրամը, «Ունիսոն», «Էյջ-Դի-Փի հիմնադրամ» և «Լիարժեք կյանք» ՀԿ-ները:

Ծրագիրը սերտորեն համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության /ԶՊԾԳ/ և զբաղվածության կենտրոնների, հաշմանդամություն ունեցող անձանց և ՀԿ-ների, մարզային իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, ծառայություններ մատուցողների, միջին մասնագիտական կրթական հաստատությունների և գործատուների հետ:

**Այս համարում կարդացեք՝**

- *«ԺԱՄԱՆԱԿՆ Է իրաԳՈՐԾԵԼՈՒ մեր կարողությունները» համապետական քարոզարշավ*
- *ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի առաքելության տնօրեն Քարեն Հիլլիարդի այցը Գյումրի*
- *Դասընթացներ «Հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու հոգեբանական առանձնահատկությունները» թեմայով*
- *Աշխատանքի տոնավաճառ Վանաձորում*
- *«IDEAS, Ներառական որոշումներ հավասար և հաշվետու հասարակության համար» ծրագիր*
- *Հայաստանում ներառական մասնագիտական կրթությունը խթանող ծրագրեր*
- *Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրը Ստեփանավանում*
- *Նոր աշխատատեղեր հաշմանդամություն ունեցող անձանց /ՀՈՒԱ/ համար*
- *LIFE-ը հայտարարում է Փոքր դրամաշնորհների ծրագիր*
- *Կարիերայի օր՝ «Կողմնորոշում, Կրթություն, Ապագա աշխատանք»*
- *Հոփսիսիմեի պատմությունը*



«ԺԱՄԱՆԱԿՆ Է ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԵՐ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»  
ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՎԱԾ  
ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈՁԱՐՇԱՎ

2013թ հունիսին մեկնարկեց LIFE ծրագրի շրջանակներում կազմակերպված «Ժամանակն է իրագործելու մեր ներուժը» համապետական քարոզարշավը, որով շեշտադրվում է հաշմանդամություն ունեցող անձանց աշխատելու կարողությունն ու իրավունքը, ինչպես նաև հավասար հնարավորությունների ստեղծման անհրաժեշտությունը:

Քարոզարշավներ նախաձեռնելու անհրաժեշտությունը կարևորվել է 2012թ. LIFE ծրագրի շրջանակներում անցկացված հանրային կարծիքի հետազոտությամբ, որը փաստում է հաշմանդամություն ունեցող անձանց կարողությունների և իրավունքների մասին հանրային իրազեկության պակասը:

Թեև LIFE ծրագիրն իրականացվում է Երևանում և Արարատի, Գեղարքունիքի, Լոռու ու Շիրակի մարզերում, քարոզարշավը իրականացվում է Հայաստանի բոլոր մարզերում՝ ներառելով հանրային իրազեկության բարձրացման նախաձեռնություններ, կլոր-սեղան քննարկումներ, մասնագիտական կողմնորոշման մարզային հանդիպումներ և մամլո ասուլիսներ հիմնական շահագրգիռ կողմերի, լրատվամիջոցների և հաշմանդամություն ունեցող անձանց հետ: Քարոզարշավի ընթացքում հայտարարվեց նաև LIFE ծրագրի շրջանակներում նախաձեռնված փոքր դրամաշնորհային ծրագիրը, որի նպատակն է խթանել հասարակական կազմակերպությունների և գործարար կառույցների համագործակցությունը հանուն ՀՈՒԱ զբաղվածության ապահովման:

Միջոցառումները կազմակերպվում են մարզային և քաղաքային իշխանությունների, LIFE ծրագրի գործընկեր կազմակերպությունների, հաշմանդամություն ունեցող անձանց և գործատուների հետ սերտ համագործակցությամբ:

Քարոզարշավը հիմնվում է նաև LIFE ծրագրի շրջանակներում պատրաստված իրազեկության բարձրացմանն ուղղված տեսագրական և տպագիր նյութերի վրա: Քարոզարշավի մասնակիցներին ներկայացվող նյութերի թվում են **թեմատիկ պաստառը**, ՀՈՒԱ զբաղվածությանն ուղղված ԶՊԾԳ և պետական ծրագրերը ներկայացնող **տեղեկատվական բրոշյուրները**, «Մենք կարող ենք աշխատել» վիրտուալ **ֆոտո ցուցահանդեսը** և ՀՈՒԱ կարողություններին անրադարձող երկու **սոցիալական տեսահոլովակներ**:

Քարոզարշավը կեզրափակվի 2013թ LIFE-ի կողմից իրականացված «ՀՈՒԱ զբաղվածության կարիքների և խոչընդոտների» վերլուծության արդյունքների ներկայացմամբ:



## ԱՄՆ ՄԶԳ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՔԱՐԵՆ ՀԻՎԼԻԱՐԴԻ ԱՅՅԸ LIFE ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԵՐ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Ապրիլի 29-ին ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի առաքելության տնօրեն Քարեն Հիլիարդը այցելեց Գյումրիում LIFE ծրագրի իրականացման վայրերը: Գյումրիի Զբաղվածության տարածաշրջանային (ԳԶՏԿ) Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոններ (ՀՄԿ ԱՎԿ) այցելության ժամանակ նրան ուղեկցում էին ԱՄՆ ՄԶԳ ծրագրերի կառավարման մասնագետ Տաճատ Ստեփանյանը, զարգացման ծրագրերի գծով կապի և տեղեկատվության համակարգող Արմինե Կարաբեկյանը, «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպության և LIFE ծրագրի ներկայացուցիչները, ինչպես նաև HDP Հիմնադրամի LIFE ծրագրի թիմը:



Տիկին Հիլիարդը ծանոթացավ կենտրոնների ամենօրյա գործունեությանը, ՀՈՒԱ շահառուների և աշխատանք փնտրողների հետ աշխատելու սկզբունքներին, ինչպես նաև LIFE ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված աշխատանքային մեթոդներին և աշխատակիցների հմտություններին:

Այցելուները ականատես եղան նաև LIFE ծրագրի շրջանակներում վերապատրաստված մասնագետների կողմից իրականացվող աշխատանք փնտրող երկու հաշմանդամություն ունեցող անձանց տեստավորմանը դիտարկման մեթոդաբանությամբ և ՄԱՍ/ՐԱՎԱՐԴ սարքավորման անմիջական կիրառմամբ:

ԳԶՏԿ, ՀՄԿ ԱՎԿ և LIFE ծրագրի թիմի հետ քննարկվեցին նաև ծրագրի հաջողությունները, իրականացման խոչընդոտները և հետագա համագործակցությունը հանուն Շիրակի մարզում բնակվող ՀՈՒԱ զբաղվածության խնդրի լուծման:



**ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ «ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ**

2013թ. փետրվար-մայիս ամիսներին իրականացվեցին «Հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու հոգեբանական առանձնահատկությունները» թեմայով դասընթացներ ԶՊԾԳ Երևանի և չորս թիրախ մարզերի (Արարատ, Գեղարքունիք, Լոռի և Շիրակ) զբաղվածության կենտրոնների աշխատակիցների համար: Դասընթացների նպատակն էր օգնել ԶՊԾԳ ներկայացուցիչներին հաղթահարել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքով ապահովելու գործընթացում ծագող հոգեբանական բնույթի խոչընդոտներն ու դժվարությունները, որոնք ՀՈՒԱ Էմոցիոնալ ու վարքային խնդիրների, կենտրոնացման դժվարությունների, ինչպես նաև ցածր ինքնագնահատականի կամ ինքնավստահության հետևանք են: Դասընթացները վարեցին «Ունիտոն» ՀԿ-ի փորձագետներ, հոգեբաններ Անահիտ Թևոսյանը և Վահե Բունիաթյանը:

Դասընթացներն իրականացվել են ինտերակտիվ եղանակով՝ վարժությունների ու դերային խաղերի, քննարկումների ու մտազրույցի կիրառմամբ, որոնց արդյունքում մասնակիցները ընդլայնեցին իրենց կարողություններն ու հմտությունները, ինչպես նաև վերհանեցին մի շարք հարցեր, որոնք խոչընդոտում են իրենց աշխատանքը:

Դասընթացներին մասնակցեցին ընդհանուր առմամբ ԶՊԾԳ 46 ներկայացուցիչներ, որոնք նշեցին նման վերապատրաստումների օգտակարությունը և կազմակերպման կարևորությունը ոչ միայն զբաղվածության կենտրոնների աշխատակազմի, այլև՝ գործատուների համար:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՈՆԱՎԱՃԱՌ ՎԱՆԱՉՈՐՈՒՄ**

2013թ մայիսի 8-ին Վանաձորում տեղի ունեցավ հերթական «Աշխատանքի տոնավաճառը»: Այն կազմակերպվել էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության նախաձեռնությամբ և Լոռու մարզում LIFE ծրագրի գործընկեր «Լիարժեք կյանք» ՀԿ-ի հետ համագործակցությամբ:

2013-ի մայիսի 1-ի դրությամբ Լոռու մարզային զբաղվածության կենտրոնում հաշվառված են հաշմանդամություն ունեցող 129 անձինք, որոնց մեծամասնությունն արդեն իսկ մասնակցել է ծրագրի շրջանակներում կազմակերպված «Կյանքի հմտություններ և աշխատանքի պատրաստվածություն» դասընթացին: LIFE ծրագրի աջակցությամբ նրանք կարողացան մասնակցել տոնավաճառին և ներկա գտնվող 32 գործատուներին (530 առկա և 92 սպասվելիք թափուր աշխատատեղերով) ներկայացնել իրենց ինքնակենսագրականները (CV):

Միջոցառմանը ներկա էր նաև ԶՊԾԳ նորանաշանակ պետ Արտակ Մանգասարյանը, որը, իր խոսքում կարևորելով միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը, նշեց, որ. «LIFE ծրագիրը մի կողմից նպաստում է ՀՈՒԱ զբաղվածության խնդրի լուծմանը, իսկ մյուս կողմից՝ աջակցում ՀՈՒԱ հետ աշխատանքի ԶԿ աշխատակիցների կարողությունների զարգացմանը»: Միջոցառման ավարտին Զբաղվածության Վանաձորի մարզային կենտրոնի տնօրեն Արա Առաքելյանը շնորհակալագրեր հանձնեց մարզային լրատվամիջոցներին: Շնորհակալագրի արժանացավ նաև «Լիարժեք կյանք» ՀԿ-ի համանուն պարբերաթերթը՝ ի դեմս խմբագիր Սուրեն Մաղաքյանի՝ կենտրոնի հետ ակտիվորեն համագործակցելու համար:

## «IDEAS, ՆԵՐԱՌԱՎԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՀԱՎԱՍԱՐ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳԻՐ



Հունիսի 12-ին «Կոնգրես» հյուրանոցի շքասրահում տեղի ունեցավ «IDEAS ներառական որոշումներ հավասար և հաշվետու հասարակության համար» եռամյա տարածաշրջանային ծրագրի մեկնարկին նվիրված մամուլի ասուլիսը, որին մասնակցում էին ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը, Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Արևիկ

Սարիբեկյանը և «Ունիտոս» ՀԿ-ի գործադիր տնօրեն Արմեն Ալավերդյանը: Ծրագրի նպատակն է հզորացնել հաշմանդամության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների դերը և կարողությունները՝ տեղական ինքնակառավարման մարմինների հետ որոշումներ ընդունելու, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության մշտադիտարկում իրականացնելու գործընթացում արդյունավետ աշխատելու համար: Ծրագրի շրջանակում կազմակերպվելիք տարբեր միջոցառումների միջոցով նախատեսվում է՝

- *Ստեղծել մեխանիզմներ, որոնք կապահովեն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունն ու կարիքների բավարարումը որոշումների կայացման գործընթացում,*
- *Հաշմանդամության հարցերով զբաղվող ՀԿ-ներին, ՏԻՄ-երին և ՁԼՄ-ներին ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներին վերաբերող իրազեկման նյութերով,*
- *Ապահովել հաշմանդամության խնդիրներով զբաղվող ՀԿ-ների ներգրավվածությունը կառավարության որոշումների կայացման գործընթացում և կարևորել տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ աշխատանքը:*

Ծրագիրն ֆինանսավորվում է Բրիտանական խորհրդի և Եվրոպական միության կողմից և իրականացվում է վեց երկրում՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Հորդանան, Լիբանան և Ուկրաինա: Հայաստանում ծրագիրն իրականացվում է «Ունիտոս» ՀԿ-ի հետ համագործակցությամբ:

Ծրագրի առաջին՝ «Future Search» համաժողովը, տեղի ունեցավ հունիսի 12-ից-14-ը: Համաժողովին մասնակցեցին կառավարության, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների ներկայացուցիչները, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձինք:

Համաժողովի մասնակիցների ուշադրության կենտրոնում էին հաշմանդամության ոլորտին առնչվող խնդիրները, միասնական եղանակով քննարկվում էին լուծման հնարավորությունները և կազմվում գործողությունների ծրագրեր:

Համաժողովը վարեց Միացյալ Թագավորությունից ժամանած փորձագետ Մայքլ Մուրը:



LIFE ծրագրի շրջանակներում, 2013 թ. հունիսից մինչև 2014 թ. հուլիսը «Սեյվ դը չիլդրենը» կազակցի հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների (ՀՈՒԱԿ)/ՀԿ-ների և նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 14 ծրագրերի իրականացմանը՝ հաշմանդամություն ունեցող անձանց (ՀՈՒԱ) համար ուսումնական/աշխատանքային միջավայրը բարելավելու, շուկայական պահանջարկ ունեցող նոր ծրագրեր մշակելու, ինչպես նաև ՀՈՒԱ ինտեգրմանը, մասնագիտական վերապատրաստմանն ու վերականգնմանը նպաստող ներառական միջավայր ստեղծելու նպատակով:

Ծրագրերն իրականացվելու են Երևանում և LIFE ծրագրի 4 թիրախ մարզերում: Նախատեսվում է, որ ծրագրի արդյունքում ավելի քան 1200 հաշմանդամություն ունեցող երիտասարդներ ձեռք բերելով աշխատաշուկայում պահանջարկ ունեցող արհեստագործական հմտություններ և զարգացնելով աշխատանքային կարողությունները, կկարողանան հաղթահարել հասարակությունում իրենց լիարժեք մասնակցությանը խոչընդոտող արգելքները:

Ծրագրերի իրականացումը կընձեռի հետևյալ հնարավորությունները.

- *ՀՈՒԱ ինտեգրման համար Ֆիզիկական, ճանաչողական, ուսումնական/աշխատանքային միջավայրի բարելավում,*
- *ՄԿՈՒ հաստատություններում ներառական միջավայրի ապահովում և ՀՈՒԱ համար ներառական մասնագիտական կրթության մատչելիության խթանում,*
- *Մասնագիտական կրթության և աշխատաշուկայի միջև կապի ստեղծում՝ ՀՈՒԱ աշխատանքային պրակտիկայով կամ աշխատանքով ապահովելու նպատակով,*
- *Ֆորմալ և/կամ ոչ ֆորմալ ներառական մասնագիտական կրթության տրամադրում և ՀՈՒԱ հմտությունների և ունակությունների զարգացում՝ աշխատաշուկա մուտք գործելու համար,*
- *Հաշմանդամություն ունեցող երիտասարդների ներառական մասնագիտական կրթության համար անհրաժեշտ մեթոդաբանության, ուսումնական ծրագրերի, ուսուցիչների համար օժանդակ նյութերի մշակում,*
- *Շուկայի պահանջներին համապատասխանող գիտելիքներ և հմտություններ տրամադրող նոր մասնագիտական ծրագրերի մշակում,*
- *Միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատությունների և գործատուների, ներառյալ մասնավոր սեկտորի ներկայացուցիչների միջև կապերի ամրապնդում՝ հանուն ՀՈՒԱ զբաղվածության ապահովման,*
- *Հոգեբանական խոչընդոտների վերացմանն ուղղված աջակցություն,*
- *ՀՈՒԱ կարիերայի ուղղորդման մեխանիզմների մշակում՝ ուսանողի հմտությունների և աշխատունակության անհատական գնահատման հիման վրա հաշմանդամություն ունեցող երիտասարդներին համապատասխան ընտրության հնարավորություն տալու նպատակով,*
- *ՄԿՈՒ հաստատությունների ՀՈՒԱ հետ աշխատելու ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում:*

Ծրագրի իրականացման ընթացքում, 2013 թ. մայիսի 31-ին «Սեյվ դը չիլդրենը» նախաձեռնեց առաջին համակարգող հանդիպումը դրամաշնորհառու կազմակերպությունների հետ՝ ներկայացնելու առաջիկա ծրագրերը, ինչպես նաև Սեյվ դը չիլդրեն կազմակերպության «Երեխաների պաշտպանության կանոնակարգը» և «Դրամաշնորհների կառավարման ընթացակարգը»:

«ԼԻԱՐԺԵՔ ԿՅԱՆՔ» ԲԶԿ-Ն ՆՇՈՒՄ Է ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ ՍՏԵՓԱՆԱՎԱՆՈՒՄ

«Լիարժեք կյանք» ԲԶԿ-ն, ձևավորած ավանդույթի համաձայն, այս տարի ևս որոշել էր գունավորել Երեխաների իրավունքների պաշտպանության օրը՝ ուշադրության կենտրոնում պահելով հաշմանդամություն ունեցող երեխաների խնդիրները: Ստեփանավանի կենտրոնական հրապարակում Անդրանիկ Մարգարյանի անվան մշակույթի պալատի և քաղաքապետարանի աջակցությամբ կազմակերպված «Լիարժեք կյանք» ԶԿ-ի տոնական հունիսմեկյան ֆլեշ մոբ-ակցիան համընկավ LIFE ծրագրի շրջանկներում իրականացվող համապետական քարոզարշավի մեկնարկին: Տոնական միջոցառման մասնակից երեխաներին, որոնց թվում էին նաև հաշմանդամություն ունեցող բազմաթիվ երեխաներ, հայրական օրհնության խոսք հղեց Ստեփանավանի և տարածաշրջանի հոգևոր հովիվ Վոսան արքեպ Ղազարյանը: Օրվա հերոսներին ողջունեցին նաև «Լիարժեք կյանք» ԶԿ նախագահ Սուրեն Մաղաքյանը և Անդրանիկ Մարգարյանի անվան մշակույթի պալատի տնօրեն Անուշ Ղարաքեշիշյանը, ովքեր կրկին հավաստեցին, որ բոլոր երեխաները հավասար են և ունեն հավասար իրավունքներ բոլոր ոլորտներում՝ կրթության, առողջապահության, սոցիալական, մշակույթի, սպորտի և այլն:

Երեխաները հնարավորություն ունեցան զբաղվելու կավճանկարչությամբ, լսելու ելույթներով հանդես եկող մշակույթի պալատի վոկալ ստուդիայի սաներին, դիտել Հովհաննես Թումանյանի «Անխելք մարդը» հեքիաթի բեմականացումը, որ պատրաստել էին «Հեյֆրը Արմենիա» բարեգործական ԶԿ-ի շահառուները:

Ինչպես նշեց Սուրեն Մաղաքյանը, կազմակերպությունը, առաքելություն ունենալով նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ու խնդիրների լուծմանը, մեծապես կարևորում է բարենպաստ միջավայրի ապահովումն ու բարեկեցիկ պայմանների առկայությունը՝ որպես երեխաների ներդաշնակ դաստիարակության և զարգացման թիվ 1 նախապայման, «Այս միջոցառմամբ մենք նպատակ ունենք ևս մեկ անգամ հանրության ուշադրությունը բևեռել երեխաների խնդիրներին, ապահովել նրանց հավասար մասնակցությունը համայնքային կյանքին ու միջոցառումներին:»

Տոնական միջոցառումն այնքան հետաքրքիր էր, որ անգամ կարկտաբեր ամպերն ու մերթ ընդ մերթ տեղացող անձրևը չկարողացան խոչընդոտել: Ամենահետաքրքիրը փուչիկներով ֆլեշմոբն էր, որի գաղափարը ծագեց հենց հրապարակում: Երեխաներն ու ծնողները սպիտակ փուչիկներով եզրագծեցին Երկիր մոլորակը, իսկ ներսում կարմիր, կապույտ, ծիրանագույն փուչիկներով հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաները կազմեցին Հայոց եռագույնը՝ խորհրդանշելով, որ Երկիր մոլորակում բոլորը հավասար են:

Լուսինե Սարգսյան



2013թ. ապրիլին LIFE ծրագիրը հայտարարել էր բաց մրցույթ Երևանում գործող գործարար կառույցների միջև՝ խթանելու գործող կառույցների հզորացումը, ծառայությունների ծավալների և արտադրական կարողությունների ընդլայնումը ՀՈՒԱ համար՝ նոր ինտեգրված աշխատատեղերի ստեղծելու նպատակով: Մրցույթի հայտարարությունը տպագրվել էր ինչպես մամուլում, այնպես էլ տարածվել էր բազմաթիվ բիզնես կառույցների շրջանում:

Մրցույթի արդյունքում ընտրող հանձնաժողովի կողմից հավանության և ֆինանսավորման արժանացան «Վասնետ» և «Զարտպրինտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների առաջարկները, որոնց իրականացման արդյունքում «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության Երևանի զբաղվածության կենտրոններում գրանցված մոտ 30 հաշմանդամություն ունեցող անձինք կանցնեն համապատասխան մասնագիտական վերապատրաստում, իսկ 19 ՀՈՒԱ կապահովվեն աշխատանքով:

LIFE թիմը շնորհավորում է ընտրված կազմակերպություններին և նախաձեռնություններին մաղթում հաջող իրականացում:

**ՓՈՔՐ ԴՐԱՄԱՇՆՈՐՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ՝ Ի ՆՊԱՍՏ ՀՈՒԱ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ**

Ս.թ. հունիսի 18-ին LIFE ծրագրի շրջանակներում հայտարարվեց Փոքր դրամաշնորհների ծրագիր՝ Հայաստանում քաղաքացիական հասարակության և գործարար համայնքի համագործակցությունը խթանելու՝ ի նպաստ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման:

LIFE ծրագրի աջակցությունը կարող են ստանալ ՀԿ - Բիզնես կառույց համատեղ նախաձեռնությունները, որոնք ուղղված կլինեն.

- գործող ձեռնարկության տեխնիկական հնարավորությունների ընդլայնմանը, նոր ինտեգրացված աշխատանքային միջավայրի ստեղծմանն ու նորաստեղծ աշխատատեղերում 10-12 ՀՈՒԱ ընդգրկմանը,
- նոր ինտեգրված ձեռնարկության (սոցիալական ձեռնարկության մոդել) ստեղծմանը, որտեղ աշխատակիցների 70% պետք է լինեն ՀՈՒԱ,
- հաշմանդամություն ունեցող 10-12 անձանց զբաղվածության ապահովում գործող ձեռնարկությունում՝ աշխատատեղերի հարմարեցման և համապատասխան պայմանների ստեղծման միջոցով:

Փոքր դրամաշնորհային ծրագրի մանրամասներն ու հայտի փաթեթը տեղադրված են [www.lfe-disability.am](http://www.lfe-disability.am) կայք էջում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը ս.թ. օգոստոսի 23-ն է:



Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոնի նախաձեռնությամբ հունիսի 25-ին «Բեստ Վեստեռն Կոնգրես» հյուրանոցի շքասրահում անցկացվեց կարիերայի օր՝ «Կողմնորոշում, կրթություն, ապագա աշխատանք» խորագրով: Միջոցառումը իրականվեց Եվրոպական կրթական հիմնադրամի օժանդակությամբ՝ «Գլոբալ զարգացումներ» հիմնադրամի և «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության հետ համագործակցությամբ:



Միջոցառման նպատակն էր աջակցել հանրակրթական դպրոցների ավարտական դասարանների աշակերտներին և նրանց ծնողներին՝ ստանալու կողմնորոշում, տեղեկատվություն և խորհրդատվություն ՄԿՈՒ հաստատություններում կրթություն և ուսուցում ստանալու, իսկ ուսանողներին՝ ապագա աշխատանք փնտրելու հնարավորությունների մասին:

Տոնավաճառին մասնակցեցին թվով 36 կազմակերպություններ, այդ թվում՝ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական հաստատություններ, գործատուներ, ARMSCOOP գիտակրթական ցանցը և «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունը:

ՄԿՈՒ հաստատությունները հանդես եկան տաղավարներով՝ միաժամանակ ցուցադրելով վարպետաց դասեր իրենց մոտ ուսուցանվող տարբեր մասնագիտությունների գծով:

Միջոցառմանը մասնակցեցին նաև հաշմանդամություն ունեցող երիտասարդներ, ովքեր հնարավորություն ունեցան մեկ հարկի տակ ծանոթանալու ՄԿՈՒ հաստատությունների կողմից առաջարկվող մասնագիտություններին, որակավորումներին, ուսումնառության պայմաններին, նաև այն նախաձեռնություններին, որոնք կիրականացվեն հաստատություններում ՀՈՒԱ կրթությունն ապահովելու համար:

Հրավիրվել էին նաև LIFE ծրագրի դրամաշնորհառու ՄԿՈՒ հաստատությունները՝ Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջը, Երևանի տարածաշրջանային թիվ 1 և ԱՃեմյանի անվ. թիվ 2 պետական քոլեջները, որոնք ծրագրի շրջանակներում առաջարկում են համապատասխան պայմաններ հաշմանդամություն ունեցող երիտասարդների մասնագիտական կրթությունն ապահովելու համար:



Տոնավաճառից հետո մի շարք հաշմանդամություն ունեցող երիտասարդներ ուղղորդվել են մասնագիտական կրթություն ստանալու՝ սեղանի ձևավորում, վարսահարդարում և ծաղկի ձևավորում մասնագիտություններով:

Այս ուղղությամբ աշխատանքները կլինեն շարունակական:

## ՀՌԻՓՄԻՄԵՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հռիփսիմենն ապրում է Մասիսում, իր շատ հասակակիցների նման նա ևս սիրում է զբոսնել, կարդալ, շփվել ընկերների և մտերիմների հետ: Ունի լսողության խնդիրներ: Չնայած նրան, որ տիրապետում է ժեստերի լեզվին, ընկերների հետ շփումը տարիներ շարունակ իրականացնում էր հիմնականում վիրտուալ դաշտում՝ օգտվելով տարբեր սոցիալական կայքերի ընձեռած հնարավորություններից: Երկար ժամանակ անցկացնելով համակարգչի վիրտուալ տիրույթում, մի օր Հռիփսիմեն որոշեց վերադառնալ իրականություն և իր կողմից կատարած առաջին քայլը աշխատանք որոնելն էր: Մի շարք գործատուների այցելելուց հետո, նա դիմեց Մասիսի զբաղվածության տարածքային կենտրոն ու հաշվառվեց որպես աշխատանք փնտրող:

Մասիսի ՉՏԿ-ի և HDP հիմնադրամի համագործակցության արդյունքում Հռիփսիմեն գտավ աշխատանք. տարվա սկզբին LIFE ծրագրի շրջանակներում կազմակերպվել էր հանդիպում մարզում գործող գործարար կառույցների ներկայացուցիչների հետ, որին ներկա էր նաև «Գարուն» կարի միավորման մարդկային ռեսուրսների բաժնի ղեկավարը: Վերջինիս հետ քննարկվեցին ՀՌԻԱ զբաղվածության հնարավորությունները «Գարուն» միավորման մասնաճյուղում: Հանդիպման ժամանակ պայմանավորվածություն ձեռք բերվեց՝ Հռիփսիմենին աշխատանքի տեղավորելու նպատակով, իսկ որոշ ժամանակ անց Հռիփսիմենն հրավիրվեց հարցազրույցի:

Հռիփսիմենն այցելեց գործատուին ու չնայած նրան, որ իր առաջին հարցազրույցն էր և գործատուն էլ չէր տիրապետում ժեստերի լեզվին, հարցազրույցն անցավ բավականին ջերմ մթնոլորտում և գործատուն համաձայնեց հնարավորություն տալ Հռիփսիմենին դրսևորել իրեն որպես լավ աշխատակից և կոլեկտիվի անդամ: Հռիփսիմենն ընդունվեց աշխատանքի՝ որպես փաթեթավորող, սակայն նա ոչ միայն աշխատում է, այլ նաև սովորում է կարելու վարպետությունը իր ավագ գործընկերներից: Աշխատանքային ընկերները ոգևորությամբ նշում են, որ նրա աշխատասիրությունը և ձգտումը դեռ շատ բարձունքների կհասցնեն նրան:



Քրիստինե Հովհաննիսյան

2012թ-ի հունվարից մինչ օրս

**151**

հաշմանդամություն ունեցող անձինք  
տեղավորվել են աշխատանքի

## Ուշադրություն

*Ի գիտություն հետազոտողների, հասարակական և մասնավոր սեկտորի. ՏԵՂԵԿԱԳԻՐԸ հնարավորություն է տալիս լուսարանել հաշմանդամության ունեցող անձանձ ուղղված ծրագրերը/հետազոտությունները: Հետաքրքրվածության դեպքում կարող եք դիմել LIFE ծրագրի օգնական Մարիա Գևորգյանին՝ [Maria.Gevorgyan@savethechildren.org](mailto:Maria.Gevorgyan@savethechildren.org) էլ. հասցեով:*

**LIFE ՏԵՂԵԿԱԳԻՐԸ** պատրաստվում է ԱՄՆ ՄԶԳ Ֆինանսավորմամբ իրականացվող LIFE ծրագրի շրջանակներում: Տեղեկագրում արտահայտված տեսակետները հեղինակներինն են և կարող են չարտացոլել ԱՄՆ ՄԶԳ-ի կամ «Սեյվ դը չիլդրենի» տեսակետները:



**Save the Children**

«Սեյվ դը չիլդրենը» երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ամենամեծ կազմակերպություններից է աշխարհում: Այն ներառում է 29 ազգային կազմակերպություններ, որոնք գործում են ավելի քան 120 երկրներում:

**«Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ»-ի հայաստանյան ներկայացուցչություն**

Հայաստան, Երևան 0014, Ազատության պող. 27, 3-րդ հարկ  
Հեռ.՝ (374-10) 20-10-14, 20-10-25, 20-10-29; Ֆաքս՝ (374-10) 20-12-29

Էլ. փոստ՝ [Armenia@savethechildren.org](mailto:Armenia@savethechildren.org)

Վեբ կայք՝ [www.savethechildren.net](http://www.savethechildren.net); [www.life-disability.am](http://www.life-disability.am)



facebook



youtube